# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

ելից N15/19
15. հունվարի 2019թ.

*ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ*
*Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ*

Կից ներկայացնում եմ Մեծավան համայնքի ղեկավարի թիվ 1-5 որոշումները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ՔԱՋԱԿՈՒԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<09>> հունվարի 2019 թվականի N 1-Ա

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ N70 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածով, <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքի>> 188. հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման համապատասխան դրույթներով, նկատի ունենալով, որ այդ բնակելի տան և օժանդակ կառույցների պահպանումը և շահագործումը չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որ այն կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքկառույցը չի հակասում <<ՀՀ հողային օրենսգրքի>>60-րդ հոդվածի պահանջներին, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, ելնելով <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի հաշվետվությունից, նկատի ունենալով Նորայր Ժորայի Սիմիկյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրինական ճանաչել Լոռու մարզի Մեծավան գյուղում Վարդանանց N70 հասցեում գտնվող ինքնակամ կառույցը՝ բնակելի տուն: Բնակելի տան օրինականացման համար սահմանված վճարը կազմում է 44250.57 դրամ:
2. Օրինական ճանաչել Լոռու մարզի Մեծավան գյուղում Վարդանանց N70 հասցեում գտնվող ինքնակամ կառույցները՝
   1)բաց պատշգամբ- 18,52ք.մ
   2)մառան-20,30ք.մ
   3)ավտոտնակ-33.59ք.մ
   4)բաղնիք-10.23ք.մ
   5)հավանոց-4.20ք.մ
   6)անասնագոմ-16.17ք.մ
3. Նորայր Ժորայի Սիմիկյանին պատկանող ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը կազմում է բաց պատշգամբ՝ 4889.28 ՀՀ դրամ, մառան՝ 5359.2 ՀՀ դրամ, ավտոտնակ-8867.76 ՀՀ դրամ, բաղնիք՝ 2700.72 ՀՀ դրամ, հավանոց՝ 1108.8 ՀՀ դրամ և անասնագոմ՝ 4268.88 ՀՀ դրամ:
4. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<09>> հունվարի 2019 թվականի N 2-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ <<ՍԵՐՅՈԺԱ ԱՎԵՏՅԱՆ>>-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր <<Սերյոժա Ավետյան>>-ի 2019թվականի հունվարի 9-ի հայտը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի <<Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հարային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն տալու>> թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզի Մեծավան համայնքի Միխայլովկա բնակավայրում գործող անհատ ձեռնարկատեր <<Սերյոժա Ավետյան>>-ի հայտը բավարարել և նրան տալ 2019թ. առաջին եռամսյակում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլատվությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> հունվարի 2019 թվականի N 3-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածի 1-ին մասով և 35 հոդվածի 22-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Լոռու մարզի Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Մերուժան Գևորգի Խաչոյանին, Վարդանուշ Միսակի Խաչոյանին, Գևորգ Մերուժանի Խաչոյանին և Արման Մերուժանի Խաչոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տալ հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Այվազյան փ. N 15:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

<<11>> հունվարի 2019 թվականի N 4-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածով և 35 հոդվածի 22-րդ կետով, հիմք ընդունելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հատկացված 0,23703հա հողամասում (ծածկագիր 06-074-0034-0006) Ազատ Բեգլարի Մելքոնյանը/մահ. 2005թ./ և Սուսաննա Արամայիսի Մելքոնյանը Մեծավան համայնքի Գայի փ. N65 հասցեում մինչև 2001թվականի մայիսի 15-ը առանց իրավահաստատող փաստաթղթերի կառուցել են բնակելի տուն և օժանդակ շինություններ, որոնք չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն հաշվառվել որպես ինքնակամ կառույց, չեն առաջացնում սերվիտուտի հարկադրանք, չեն հակասում << ՀՀ հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածի պահանջներին, օրենքով սահմանված կարգով /ժառանգության ընդունում 596-20181226-84-3377509/ Ազատ Բեգլարի Մելքոնյանին պատկանող տնամերձ հողամասը և շենք շինությունները անցել են նրա կնոջը՝ Սուսաննա Արամայիսի Մելքոնյանին՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի սահմանված կարգով ճանաչել Մեծավան համայնքի Գայի փ. N65 հասցեում գտնվող 0,23703հա (ծածկագիր 06-074-0034-0006) տնամերձ հողամասի, բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ Սուսաննա Արամայիսի Մելքոնյանի սեփականության իրավունքը:
2. Լոռու մարզի Մեծավան համայնքի Գայի փ. N65 հասցեում գտնվող 0,23703հա տնամերձ հողամասի վրա գտնվող շենքը և օժանդակ շինությունները ճանաչել օրինական:
3. Ճանաչել ներքոհիշյալ կառույցի նկատմամբ Սուսաննա Արամայիսի Մելքոնյանի սեփականության իրավունքը՝
   1) Բնակելի տուն- 51,04 ք.մ.
   2) Բնակելի տուն-6,75 ք.մ.
   3) Բնակելի տուն -108,29ք.մ.
   4) Բաց պատշգամբ -26,15ք.մ.
   5) Պարիսպ-1,91ք.մ.
   6) Պարիսպ-2,70ք.մ.
   7) Պարիսպ-1,42ք.մ.
   8) Պարիսպ-0,29ք.մ.
   9) Պարիսպ-5,83ք.մ.
4. Սուսաննա Արամայիսի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տալ հասցե ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան Գայի փ. N65 :
5. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթական են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Մեծավան, (0254)24221, (096)440261, metsavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**<<14>> հունվարի 2019 թվականի N 5-Ա**

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42. հոդվածի 1-ին մասով և 35 հոդվածի 22-րդ կետով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Լոռու մարզի Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող հանգուցյալ բնակիչներ Թելեմակ Համազարի Ջավուկցյանին և Սոնիկ Ավետիսի Ջավուկցյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տալ հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծավան, Տերյան փ. N16:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<<14>> հունվարի 2019 թ.
գ. Մեծավան